



ՍՈՒՐԲ ԶԱԿՈՒ ԱՌԵՎՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐԻ ԵԿՂԵԿԻ

Երկրորդ Ծաղկաշաբաթ
1 Յունի 2025

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ողորմութեան Կանչ Մը (Շար. 45)	Էջ 3
Ծանուցումներ	Էջ 3,4

ԸՆԹԵՐՑՈՒՄ «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ» ԳԻՐՔԵՆ (23.12-35)

Յաջորդ առաւօտ կարգ մը հրեաներ իրարու քով եկան եւ իրենք զիրենք նզովքի տակ դնելով երդում ըրին չուտել ու չխմել՝ մինչեւ չսպաննեն Պողոսը: Քառասուն հոգիէն աւելի էին այս երդումը ընողները: Ասոնք մօտեցան քահանայապետներուն եւ երէցներու եւ ըսին. «Մենք նզովքի տակ դնելով մենք մեզ երդում ըրինք բան չճաշակել, մինչեւ Պողոսը չսպաննենք: Դուք ատեանին անունով հազարապետին լուր դրկեցէք որ զայն ձեզի զրկէ, պատճառաբանելով թէ կ'ուզէք իր մասին աւելի ստոյգ տեղեկութիւն ունենալ: Իսկ մենք պատրաստ կ'ըլլանք արդէն եւ տակաւին հոս չհասած՝ կը սպաննենք զինք»:

Պողոսի քեռորդին այս դաւադրութիւնը իմանալով, եկաւ զօրանոց եւ Պողոսին պատմեց: Պողոս հարիւրապետներէն մէկը կանչելով ըսաւ. «Այս պատանին հազարապետին տար, որովհետեւ իրեն ըսելիք մը ունի»: Հազարապետը պատանիին ձեռքէն բռնելով մէկ կողմ տարաւ եւ հարցուց. «Ի՞նչ ունիս ըսելիք»: Պատանին ըսաւ. «Հրեաներ համաձայնեցան քեզմէ խնդրել որ վաղը Պողոսը Ատեան զրկես, որպէս թէ աւելի մանրակրկիտ հարցուփորձելու համար զայն: Բայց մտիկ մի՛ ըներ իրենց. որովհետեւ իրենց մէջէն քառասունէ աւելի մարդիկ իրենք զիրենք նզովքի տակ դնելով երդում ըրած են չուտել ու չխմել՝ մինչեւ չսպաննեն զայն. եւ հիմա դարան մտած ու պատրաստ՝ կը սպասեն

Քու հրամանիդ»:

Հազարապետը պատանին ճամբեց, պատուիրելով. «Ոեւէ մէկու մի՛ ըսեր ինչ որ ինձի յայտնեցիր»: Ապա հարիւրապետներէն երկուքը կանչելով ըսաւ. «Երկու հարիւր հետեւակ, եօթանասուն հեծեալ եւ երկու հարիւր տիգաւոր զինուորներ թող պատ-բաստ ըլլան գիշերուան ժամը իննին դէպի կեսարիա ճամբայ ելլելու: Պօղոսին համար ալ գրաստ պատրաստեցէք եւ զայն ապահով կերպով ֆելիքս կառավարիչին հասցուցէք»: Նամակ մըն ալ գրեց, հետեւեալ բովանդակութեամբ.

«Կլոդիոս Լիսիասի կողմէ՝ նորին գերազանցութիւն Ֆելիքս կառավարիչին: Ողջո՞յն:

«Հրեաներ բռներ էին այս մարդը եւ զինք սպաննելու վրայ էին: Իմանալով որ հոռմայեցի է, վրայ հասայ եւ զինք ազատեցի: Ուզեցի գիտնալ թէ ի՞նչ յանցանենվ կամբաստաննեն զինք. ուստի իրենց Ատեանը տարի զինք, եւ հասկցայ թէ իրենց Օրէնքին վերաբերող խնդրի մը համար կամբաստաննեն. այսինքն մահուան կամ բանտարկութեան արժանի յանցանք մը չունի: Բայց երբ ինձի իմացուցին թէ հրեաներ դաւ մը լարած են իր կեանքին դէմ, զայն իսկոյն բեզի դրկեցի, հրամայելով որ ամբաստանողները բեզի ներկայացնեն իրենց ըսելիքները: Ո՞ղջ եղիր»:

Հազարապետին հրամանին համաձայն, հետեւակ զինուորները առին Պողոսը եւ գիշերով Անտիպատրիս փոխադրեցին, եւ յաջորդ օրը զայն իրենց ընկերացող հեծեալներուն յանձնելով, իրենք զօրանոց վերադարձան: Հեծեալները կեսարիա հասան եւ նամակը կառավարիչին տալով Պողոսն ալ անոր ներկայացուցին: Կառավարիչը նամակը կարդաց եւ Պողոսին

Հարցուց թէ կայսրութեան ո՞ր նահանգէն է. եւ հասկնալէ ետք թէ կիլիկիայէն է, ըսաւ. «Երբ որ քեզ ամբաստանողները գան՝ կը լսեմ քեզ»: Եւ հրամայեց որ զայն Հերովդէսի ապարանքին մէջ պահեն:

յաւիտենական կեանքը:

Որդեակներս, դուք ձեզ կուռքերէ հեռու պահեցէք:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍ ՅՈՎՃԱՆՆԻՍԻ

(12.12-23)

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՅՈՎՃԱՆՆԻՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԻՆ

(5.13-21)

Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդիին
հաւատացողներուդ, որպէսզի գիտակ-
ցիք՝ թէ յաւիտենական կեանք

ունիք: Ուստի համարձակ
կերպով կը դիմենք Աստուծոյ,
այն վստահութեամբ, որ
երբ իր կամքին համա-
ձայն բան մը խնդրենք՝ կը
լսէ մեզի: Եւ երբ գիտենք
թէ մեր խնդրանքները կը
լսէ, գիտենք նաեւ թէ պիտի
ստանանք ինչ որ կը խնդ-
րենք իրմէ:

Երբ տեսնես, թէ հա-
ւատացեալներէն մին գործեց

մեղք մը, որ մահացու չէ, աղօթէ Աստուծոյ՝ որ
կեանք տայ անոր: Ասիկա կըսեմ միայն անոնց
համար, որոնց մեղքերը մահացու չեն, որովհետեւ
մահացու մեղքեր ալ կան, որոնց համար չեմ
ըսեր՝ որ աղօթէք: Ամէն անիրաւութիւն մեղք է,
բայց ամէն մեղք մահացու չէ:

Գիտենք, թէ ով որ Աստուծմէ ծնած է՝ չի

մեղանչեր, այլ Աստուծոյ

ծնունդը՝ Քրիստոս, կը

պահպանէ զայն եւ չարը

անոր չի մօտենար: Թէպէտ

ամբողջ աշխարհը չարին

ենթակայ ըլլայ, մենք

գիտենք՝ թէ Աստուծմէ ենք:

Եւ գիտենք, թէ Աստուծոյ

Որդին եկաւ ու բացաւ մեր

միտքերը, որպէսզի ճանչնանք

ճշմարիտ Աստուծածը: Մենք միացած ենք

ճշմարիտ Աստուծոյ եւ անոր Որդւոյն Յիսուս

Քրիստոսի: Ա՛ն է ճշմարիտ Աստուծածը եւ

Մենի
միացած
ենի
ճշմարիտ
Աստուծոյ
եւ անոր
Որդւոյն
Յիսուս
Քրիստոսի:

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍ ՅՈՎՃԱՆՆԻՍԻ

(12.12-23)

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն
մը, որ զատկի տօնին առիթով
երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս
երուսաղէմ կու գայ, արմաւենիի ճիւղեր առաւ
եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրածայն
աղաղակելով.

«Ովսաննա՝,

օրինեա'լ ըլլայ ան որ կու գայ Տիրոց
անունով, Խարայէլի թագաւորը»:

Յիսուս էշ մը գտնելով նստաւ անոր վրայ,
ինչպէս որ Սուլր Գիրքերուն մէջ գրուած է.

«Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛
աղջիկ, որովհետեւ թագաւորդ ֆեզի կու գայ
իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան
ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ՝
այն ատեն յիշեցին թէ այս կատարուածները
Յիսուսի համար գրուած էին եւ իրենք
այդ գրուածն էր որ կատարեցին: Բոլորն
ալ կը վկայէին թէ Յիսուս Ղազարոսը
կանչեց գերեզմանէն եւ զայն մեռելներէն
յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ
գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու
ելան, որովհետեւ լսած էին թէ ի՛նչպէս
ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ
փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնէ՞ք
որ բան մըն ալ չէք կրնար ընել. ահա ամբողջ
աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած
էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու:
Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի
Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին.
«Տէր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս,
եկաւ Անդրէասին ըսաւ եւ երկուքը միասին
Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը:
Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին
փառաւորուելու ժամը հասաւ»:



ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ Առօթքներ ճեսարիւն

ՀԵՂԻՒԱԿ՝ ՀԵՆՐԻ ՆՈՒԲՆ

ԹՎԱՐԳԱՎԱՆԻԱԽԱ՝ ԿԱՐՈ ՍՐԿ. ՆՈԽՈՒՏԵԱՎՆԻ

ՅՈՒՇԱԾՈՆ

Քաղցր Տէր, արթնցուր աշխարհի ժողովուրդներն ու անոնց դեկապլատները, որպէսզի զիտակցին կորիզային զէնքերու արշակ իւնկթութեան: Այսօր, կը սպանք անցեալ պատերազմներու մահերը, բայց արդեօք մարդ պիտի մնայ յաջորդը սպալու: Ով

Տէր, մեզ դարձուր ինքնարքանդումի այս խելազար արշաւէն. տուր որ տեսնենք, թէ առաւել ու առաւել զինամիթերք՝ հաստատօրէն կը նշանակէ առաւել ու առաւել առիթ զանոնք գործածելու: Կը խնդրեմ, Տէր, թող որ արարածներուդ քու պարզեւած սքանչելի ձիրքերու չինան այն ուժերուն ու իշխանութիւններուն ձեռքը, որոնց համար մահն է միջոցն ու նպատակը: Տեսնենք, որ ստեղծած աշխարհիդ մէջ պահուած հարստութիւնները չեն ծառայեր զիրաք կերակրելու, զիրաք բուժելու, իրարու ապաստան ըլլալու, այս աշխարհի դարձնելու վայր մը՝ ուր բոլոր ցեղերու եւ ազգերու մարդիկ, կիներ ու փոքրիկներ կարևոնան խաղաղութեամբ միասին ապրի:

Մեզի նոր մարզարէներ տուր, որոնք կրնան համարձակ, ուղիղ, համոզումով ու սիրով խօսք ուղել յազաւորներու, նախազահներու, ծերակուտականներու, եկեղեցական առաջնորդներու, եւ բարի կամեցողութիւնը ունեցող այրերու ու կիներու. մարզարէներ՝ որոնք կրնան մեզ առաջնորդել խաղաղութեան, եւ ոչ յօկ՝ պատերազմի: Տէր, շտապէ մեզի օգնելու: Մի՛ ուշամար: Ամէն:

(Շար. 45)



ՅՈԳԵԳԱԼՈՍԵԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ

ԿԻՐԱԿԻ, 8 ՅՈՒՆԻՍ 2025

Ժամերգութիւն՝ ժամը 9.30-10.30

Սկիզբ Ս. Պատարագի՝ ժամը 10.30

Կը պատարագէ եւ կը քարոզէ

ԳԵՐՈ. Տ. ՅԱԿՈԲ ՎԻԴ. ԵԱԳՈՒԹԵԱՆ

Երգեցողութեամբ՝ Արական Երգչախումբին

**Այթելեֆէ՛ք
Եկեղեցիոյս
Դիմացետրի Էջը
եւ
Զեր Համաստեհիւնը
յայտնետէք (like).**

[www.facebook.com/
SourpHagopChurch-
Montreal](https://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)

**Այթելեֆէ՛ք Ազնի
Ս. Յակոբ
Առաջարդական
Մայր Եկեղեցիոյ
Կայքէջը**
www.sourphagop.net

Զատկուայ Իրուագիւ

Ս. Յարոհեան Տօնիւ Առաջիւ,
Վատաշ Եկեղեցիւ
ու մեր բարեպահած Ժողովուրդու Պիտի
Զատկուայ
Կատարելու ԻՒՂԱԳԻՆԻ ԻՐ ԱՐՏԱՐՈՒԽ
Առիրազտուութիւնն:

ՏՆՕՐՀՆԵՔ

Տնօրինէք փափաքող ընտանիքները,
քող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Աւ. Ջին. Գոյունեանի,
հեռաձայնելով
514 909 5203 թիվն:

ՀԻՒԱԴՆԵՐՈՒ Այթելութիւն

Բարեհաճեցէք հեռաձայնել
Արժ. Տ. Գառնիկ
Աւ. Ջին. Գոյունեանի.
514 909 5203 թիվն:

Սոյս թերթիւն ե-ազակով
ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԵՐ Ե-ՀԱՍՑԵՆ
ուղարկեթէք
eglise@sourphagop.net

Թերթիւն ԱԽՈՒՐԴ ԹԻՒԵՐԸ

ԿՐԱՎՔ ԳՏՆԵԼ
www.sourphagop.net
Կայքէջիւ ՎՐԱՅ